ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «24» Հոկտեմբեր 2019 թ № 318 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի № 898-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի № 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1-րդ կետը, ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019 թվականի մայիսի 2-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի «ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիան Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» № 898-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը.

1) Հրամանի Հավելվածով սահմանված Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով. «8. «Փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում բնական հանքային ջրի անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 044/2017) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ»:

2. ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիային տրամադրված համապատասխանության գնահատման մարմնի № Ն-15 նշանակման վկայականը վերաձևակերպել՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ № 027/S-068) № 1-Բ հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված և տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի՝ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի, ինչպես նաև հավատարմագրման ոլորտում առկա տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության գնահատման ձև հանդիսացող պետական գրանցման ենթակա արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի ներքո ներառված արտադրանքի:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի № 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Բաբայանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ